անմատչելի չիչխաններու մէջ գտնուած անցուկ շաւիղ-
ներէ, ապա մտանք Շեռեան և բարձրացանք ի հա-
բաւ արևմուտս $^3/_4$ ժամու չափ, աւելի հարաւ արև-
մտեան և հարաւային միջավայրի ուղղութեամբ, գե-
ղեցիկ դրիւք զառիվեր մի բռնելով՝ լեռնային խոտերու
ու ծաղիկներու միջէն միշտ դէպի վեր և երբեմն
առնկող գնալով՝ մտանք մի փոքրիկ ձորահովիտ, որ կը
լիներ 60—80 արտաւար տարածութիւն: Այստեղ պա-
տահեցանք երեք հատ ի հինաւուրց մնացած ուռի
ծառերու, որք երկար ճիւղեր արձակած լինելով՝ օդին
մէջ մեծ տարածութիւն կը բռնէին, նաև հարիւրաւոր
ուխտաւորաց և որոց ծծկեր երեխայոցը վերայ հովանի
լինելով՝ մի մխիթարութիւն էր նաև մեզ և երբեմն
պատսպարող անձրևէ:

Այս հսկայական ծառներու ներքև մի կենդանու-
թիւն կայր. մի կողմ լուսաղբիւրը, միւս կողմ զո-
հի կաթսաներ բարկ կրակի վերայ կը գլգան (եռան)
այս կողմ գառներ՝ այն կողմ ոչխարներ կը զոհուին.
տեղ մի փոքրիկ մանկանց սուր ճիչն, տեղ մի պատա-
նեաց խաղն ու երգն, այն ինչ տեղ երիտասարդաց ա-
ղաղակն, այն ինչ վայրն դավուլ զուռնայի հնչիւնը, որոց
շուրջ պարող խումբը. դէպի բարձր կանաչ, կարմիր,
սպիտակ, կապոյտ, դեղին հագնող կանանց ու հարսանց
հագուստներու խշրտոցը և համեստ խօսակցութիւնը,
քիչ հեռուն թռչնոց և սարեկներու ճրփրտոցը, մեղու-
ներու բզզոցը, բզէզներու տզտզոցը, թիթեռնիկներու
թռթռոցը, զեռուններու զոզրոցը, նաև 2—3 առուակ-
ներու ծործորը. ասոնց միջէն երբեմն լսելի կը լինէր
այս ինչ այն ինչ ձորակէն հրացանաձգութեան ձայներ.
կենդանութիւնը տակաւ առ տակաւ կաձէր. մեզնէ քիչ